ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մարտի 2019 թվական N 25-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17-րդ հոդվածի ,***որոշում եմ***'

2019 թվականի մարտի 12-ին ժամը 11.00-ին գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ուղղակի վաճառքի թույլտվություն տալու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.մարտի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Յայաստանի Յանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060285013 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մարտի 2019 թվական N 26-Ա

# ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի, ի կատարումն Կոտայքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 22-ի N 31-Ա որոշման 2-րդ կետի, Մայակովսկի համայնքի վարչական տարածքում 2019 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

*որոշում եմ՝*

1.Հաստատել Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի վարչական տարածքում 2019 թվականի հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝

1) համայնքի հակահեղեղային կառույցների (կառույցի) հաշվառման վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն N 2 հավելվածի.

2) համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Մայակովսկի համայնքի ղեկավարի տեղակալ Բաբկեն Մարտիրոսյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Համայնքի ղեկավար | Մշտական |
| 9 | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 10 | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 11 | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Համայնքի ղեկավար | Անհրաժեշտության դեպքում |
| 12 | Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների և համայնքի արտակարգ իրավիճակների համապատաս- խան կազմակերպությունների միջև: | «Յուքոմ» ՍՊԸ | Անհրաժեշտության դեպքում |
| 13 | Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն: | «ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի «Արտվան» տեղամաս Ա. Բեգոյան | Անհրաժեշտության դեպքում |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված 3
Մայակովսկի համայնքի ղեկավարի
2019թ.մարտի 11-ի N 24-Ա որոշման

# Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մայակովսկի համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

| | |
|---|---|
| 1. Վտանգի(աղետի) անվանումը(ները)<br>- սելավ<br>- հեղեղում<br>- սողանք<br>- քարաթափում<br>- և այլն | Սելավ, հեղեղում |
| 2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը) | Գ. Մայկովսկի, գետ |
| 3. Առաջացման հնարավոր պատճառները | Ջնհալ, անձրևաջրեր |
| 4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը; Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը | Ափամերձ 50 տներ<br>100 բնակիչ |
| 5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար | Գետի հունի մաքրում |
| 6.Համայնքի բյուջեներում կամ այլ ծրագրերով 2019թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների | Համայնքի բյուջեի սղության պատճառով համայնքը չունի նման միջոցներ այս աշխատանքները իրականացնելու համար, որը իրականացնելու համար կպահաջվի 20 մլն. դրամ; |

Մայակովսկի համայնքի ղեկավար (ստորագրություն) Վ. Բաբաջանյան

Կ.Տ.

Հավելված 2
Մայակովսկի համայնքի ղեկավարի
2019թ.մարտի 11-ի N 24-Ա որոշման

# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՄԱՅԱԿՈՎՍԿԻ համայնքի հակահեղեղային կառույցների(Կառույցի) հաշվառման

| Հ/հ | Կառույցի Տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ) | Կառույցի տիպը (հեղեղատար, հեղեղակար-գավորիչ, բառաժ) | Կառույցի Երկարությունը (մ) | Կառույցի Լայնությունը (մ) | Կառույցի Խորությունը (մ) | Կառույցի Կողեզրերի թեքությունը, (0) | Կառույցի Տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ) | Մոտակա բնակավայրերի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել Կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Գետ | Հեղեղատար | 2000 /քմ/ | 15 | 3 | – | – | Սեփական տներ | Անբավարար |

Մայակովսկի համայնքի ղեկավար` ______________ Վ. Բարսեղյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13
E-mail mayakovski-1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

<< 14>> մարտի 2019թվական N 27 -Ա

## ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման կատարումն ապահովելու նպատակով՝

***ո ր ո շ ու մ  ե մ.***

1. Հաստատել՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում Մայակովսկի համայնքի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն 1 հավելվածի.
2) ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 2 հավելվածի.
3) ինժեներական տեխնիկայի հաշվարկը՝ համաձայն N 3 հավելվածի.
4) անօթևան մնացած բնակչության տարահանման և կացարաններով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի.
5) տուժած բնակչության և փրկարարական ուժերի՝ սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի.
6) տուժած բնակչության՝ հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 6 հավելվածի

2.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի վրա :

3. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Մայակովսկի համայնքի ղեկավարը :

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.մարտի 14